



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱՅ ԴԱՐԱՐ 22 ՅՈՒՆԻՍՈՒՆ 1877

ԹԻՒ 1058

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հանգրաւութիւնն կրտսիւն քաղաքական հոգիներն վերայ, որ առայժմ բարեբաղդարար ամպամած չէ: Թէեւ ի. Կ. Պօլիս դուռներու դեպքանաժողովն լուծուեցաւ առանց յաջողութեան իւր առաջարկութեանց ծրագիրն ընդունել տալ ի Բարձրագոյն Դրանէ, թէեւ յիշեալ երուսական ժողովոյն անգամքն մեկնեցան քիչկամ շատ վշտացեալ ի մերժողական պատասխանէն օսմանեան կայսերական կառավարութեան, այսու ամենայնիւ մեծ տէրութեանց Բարձրագոյն Դրան հետ ունեցած յարաբերութիւնքն կըշարունակեն դարձակատարաց միջոցաւ կարգելոյ ի նոյն ահուածեանց, որք ըստ ամենայն երեւմանց պատերազմ հրատարակելու դիտաւորութիւն չունին: Ուստի ըստ մեր կարծեաց, Արեւելեան ներկայ դժուարութեանց խաղաղասիրական լուծումն՝ մօտաւոր ժամանակի խնդիր մըն է. մանաւանդ որ Բարձրագոյն Դրան հաստատամիտ ջանիւք հոգ կըտանի զդարձագրութեան նոր բարեկարգութեանց, կամչաւ եւ է ասեւ ազգային օսմանեան Սահմանադրութեան, մարդասիրաբար շնորհելոյ ի վեհա Սուլթանէն իւր բոլոր հաւատակաշն առանց խտրութեան կրօնի և ազգայնութեան. և այս կերպիւ տարակոյս չկայ թէ թուրքիւքն ոչ միայն մահաւորական և մահմէտական հաւատակաց մէջ հաւասարութիւնը կատարեալ պիտի լինի օրինաց առջև, որով քրիստոնէից կացութեան բարեփոխումն պիտի իրագործուի առանց օտար միջամտութեան՝ որ Բարձրագոյն Դրան անկախութեան և արժանապատուութեանը մաս պիտի հասցնէր. և ահա այս օրինաւոր պատճառով որ հարկադրեաց զկայսերական կառավարութիւնն և բոլորական դեպքանաժողովն: Այսու ամենայնիւ յիշեալ առաջարկութեանց էական մասն՝ որ է բարեփոխումն կայսրութեան թուրքիւքնակ քրիստոնէից՝ արդէն սկսաւ ի գործ դրուիլ: Բարձրագոյն Սեփ-Եսպարդոս Սիլիսիւս փաշան, որոյ ազատաւոր խոհական քաղաքականութիւնն և մարդասիրական բնաւորութիւնն յայտնի է ամենուն, հաւասար քաղաքացիութեան և եղբայրսիրութեան բարի օրինակ տալով իւր կրօնակցացը, հաճեցաւ անձամբ այցելութեան երթալ ամինա. Տէր Ներսէս Ս. Պատրիարք Հօր մերոյ, նմանապէս Բունաց ամենա Ս. Պատրիարքին, Այսպիսի պաշտօնական բարձրագոյն պատիւ մի որ մինչեւ ցայսօր ոչ է եղեալ հայտաւոր ազգի մը հոգեւոր գլխոյն, հաստատուն յոյս կուտայ մեզ թէ կայսերական մարդասէր շնորհիւ հրատարակեալ նոր բարեկարգութիւնքն կատարելապէս ի գործ պիտի դրուին: Դարձեալ յօտուգողոյն ազգերէ կըլեմք թէ Բ. Դրան ինքնայօժար կամք բարեհաճեր է մատուցանել զվեհանայի հայկազուն Նուպար փաշային զպաշտօն ընդհա. կառավարչի Պուլիարիոյ: Յայտնի է թէ Նորին Վսեմութիւնն՝ որ եղիպտոսի իշխանութեան արտաքին գործոց նախորդ Տեսուչն է և բաղմամբ քաղաքական բարձրագոյն առաքելութեանց մէջ խորին և խոհական

րանաց խնց, չքաւորք էին և վշտակիր, սօքա ևս պանդխտացեալ երբեմն թափառական վարեցան յայնքաճ օտարս և զբաղդին անողորմելոյն նա իսկ քամեցին զմուրս դառնութե. հուսկ ուրեմն յաջողութեամբ բարեաց եղեն բնագոնակք, և ճոխացան քրտամբք երեսաց իւրեանց բոլոյ արդեօք, հարց դու զարժանին խնդիր թէ մուացօք եղեն բնաւ Հայրենեաց իւրեանց, դառնացաւ յունկն նոցա անուն իմ, որպէս զարդիս յոմանս որդւոց իմոց խիթայի և հրէշ իմն թուի, և մինչ անգամ մուսնալ բարեյօժարին զհայրենին գրաբաւ պերճ լեզու և զգարութիւն հայկականին:

Այսպիսի էին մաշոյղ խոսմունք իմ ի խաղաղասիր երեկոյի միում, այնինչ ուրճալին լուսինն արծաթափայլ սիգաճեմ՝ բարձրացեալ յարեւելից ի կայսրտակ աստեղախառն ճեմարանէ անտի, տիրապետէր ի վերայ լուռ և խաղաղ բնութեան համափիւռ, և թուէր գոլ միակ և եթ ունկնդիր սիրակարկալ թովական երգոյն գիշերերգակ սօսակին, որոյ սիրածայն և քաղցրանուագ գայլակիք ածին նինջ մի խորին և թանճր՝ այլ անուշակ յաջս իմ ծանրացեալ և ահա ի նոյն գտի զիս ի մարմանդ ինչ լայնածաւալ շրջափիւռ ծաղկաւետեալ, զորոյ ծայր զհորիզոնիւ չըօրէին նշմարել աչք: Բայց այժմ մեր ամենաճարտար Վերգիլիայ գրիչ ակնաւորին ի յակումբս հրաշալան, քերթողաց, և ուր նորայն իսկ նախարար խանդ առ ի գծագրել հարեանցի և եթ զհրաշային այն տեսարան բնութեան, որ յերեան ածի ինձ այժմ: Եղանակ տարւոյն էր գարնան. որ յայնժամ ծաղկապսակ գեղապանեալ ճեմն առնոյր ի մարմանդ անգր ցանկալի, որով և բնութիւնն առհասարակ թուէր հոգեւորոգ զուարճանալ: Երկն երկրն գեանաւոր ծաղկանցն քրքրագոյն պարաւորութիւն և յարաշուրճ գալարեանցն մշտափոխիլ պայծառութիւն պնտահիւս կիտաւածեալ

կենցաղադրութեան ապացոյցներ տուած է, իորին վսեմութիւնն կըսեմք, Սիւլէրի և Վէրի աստեղանաւ ի վաղուց պատուեալ է ի կայսերական կառավարութեան: Ընթերցողք մեր գիտեն արդէն թէ Կ. Պօլսոյ դեպքանաժողովն ևս՝ ըստ առաջարկութեան Սօլսպրի մարքիլին, արժան համարեալ էր զայս պաշտօնաբաշխութիւն: Փարիզի Կլոթ օրագիրն իւր կողմանէ կըհաւաստէ թէ Նուպար փաշան ընդունած է Պուլիարիոյ ընդհանուր կառավարչի պաշտօնն, որ առաջարկեալ է նմա ի Բարձրագոյն Դրանէ: Կըսուի թէ վեհ. Նուպար փաշան ի մօտ առուրս կըսպասուի ի Կ. Պօլիս:

Հեռագիրն կըմանուցանէ թէ Սերվիոյ Միլան իշխանն՝ ի նկատի առնելով զլքեալ և դտաւապեալ կացութիւն երկրին իւրոյ, մտադիր է ուղղակի բանակցել Բ. Դրան հետ հաշտութեան դաշն մի կնքելու համար: Կըհաւաստեն թէ Գորչաքօֆ իշխանն թոյլտուութիւն բերէ Սերվիոյ տիրող իշխանին, որ ի գործ դնէ զգիտաւորութիւն իւր զայս: Արդէն Սերվիոյ իշխանութեան կողմանէ դարձակալ մի յուղարկեալ է ի Կ. Պօլիս, կըսեն, զի իշխալ հաշտաւորութիւնն ի գործ դնելու համար. որոյ յաջողութեանը վերայ տարակոյս չունիմք:

Գալով Գառաւաղի իշխանին, կըլեմք թէ նա ևս Սերվիոյ կառավարութեան օրինակին հետեւելով, պիտի չյապաղի խնդրել ի վեհապետական կառավարութեանէ իւրմէ հաշտութեան բանակցութիւններ ընել ուղղակի: Բ. Դրան իւր կողմանէ պատրաստ կերեւի ընդու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿ(1)

Այս երգեցի երբեմն կարի սրտաշարժ ի լուր համառուից ի սրինգն հոգեշարժ զգերարտօսալից տեսարան եղերական սովուն, ընդ նմին և շարայարեալ զաղէսս քնքուշ սրբեկացմբնդ որոց յիրաւի վշտանայի ընդ կորուստ. սակայն այժմ երեւակայութիւն իմ համարձակութիւն լեալ խոյանայ սաւառնի ի բարձունս անգր քան զսպորականն չափ բնութեան և տայ ինձ նկատել զտեսարան իմն կարի նորահրաշ. աստ սրբաւորուչ հառաչանք և հնկեկականք աղէկէզ սրտի տեղի տան անշուշտ երախտագիտական քաղցր զգացմանց, որպէս բոլոր բերաւոր աստեղաց հալածական դառնան իսպառ ի գեղունայլ ծիրանափայլ ճաճանչից. վարդակարմիր Արփուշն: Արդարեւ քաղցր է ինձ աստանօր զողբերգականն ի բոյց եղեալ զմիմունջառնուլ ի նուագ զհայրենասիրացն երջանիկ կաճառ. զինչ քաղցր սպաքէն քան զնոցայն յիշատակել աստ գովանի հրաշակերտս, և յուշ ածել նա իսկ յօրինակ այլոց զնոցայն սիրատենչ սէր առ տաւրաղդիկն իւրեանց Հայրենիս. գործ իմն արդարեւ արժանաւոր անմուսաց և հեշտալից սրտիւ յաւերժ յիշատակի:

Երբեմն այս, չըօրէին սփոփել զսիրտ իմ ոչ զարմանահրաշ գեղածիծաղ տեսարան բնութեան և ոչ ևս ծաղկածաւալ մուսաճեմ վայրաքն սիրարուն վայելչութիւն բնական, սակայն այժմ սփոփումն ինչ գերմարդկային, չգիտեմ որպէս ակտորեղի, անկանի զինն ի տես հրաշակերտիցն յառաջ եկելոց ի Հայրենասիրացն գովանի վատաւոց: Սօքա ևս սերունդք էին յե-

(1) Ազգասէր Ե. Ռոստոմանկան բարեկամ ոմն յուրիկեալ է մեզ ի ճշդկատանէ գայս դիմառնական յղբաւ՝ գլխաւ ի դիմաց Նարչոկայի:

ի գեղազանս տարազան գեղերմնէին զգեղեցիկ վայրն ի գորդ կանաչադեղ, նա մանաւանդ բաղմատեսակք և զարմանազան վարդենեաց ազգք բուրաղուարթ փթթէին անդ. ոմանք ի գոյն կարմրերիւնն ի ծիրանի և հրաշէկ ծաւալէին անդ համափիւռ ամրոսական իմն բուրումն անուշահոտութեան, այլք ի գոյն քրքմատեսիլ և գեղճանիկ, կէսք ի սպիտակ կաթնաթոյր և ճիւղատեսիլք, բուլից աստեղաց բերելով յինքեանս զնմանութիւն, առաջի ընծայէին աչաց զգեղեցիկ իմն և հաճոյական տեսարան: Բաղմահոյլ վտականի քաղցրակարկալ սահէին սողոսկէին յարօտս անգր ցանկալի պնտեալս յանթաւաւմ և ի մանիշակ. այլուր գետ մի խոխողաճայն ոլորտապոյտ վիշապօրէն առեալ գալար եռայր փրփրադէղ և երբեմն մըտալ ի սեպացեալ ժայռից գահալիժէր ի ստոր, և այլուր երկնապող ցայտեալ ելանէր ի վեր ի տեսիլ զուարճալի: Զեփիւռք քաղցրասիւք և քաղցրաշունչ անօսր սիւք ճօճելով զերմեքանդ ծաղկանցն զթուփս և զկարմրերիւնն վարդենեացն կանաչադեղ սաղարթունս տանէին բերէին ըզբաղմաբուրեան հոտս նոցին անուշութեան: Տարմատարմ երամք օդապարից խայտաճամունկք և երմնանկարք ի փետուրս ի ծաղկաւետ մարդագետնի անդ խայտային, և նուագաւոր նոցին խումբք մեկուսի ի բացէ հնչեցուցանէին զվայրն ի գայլալիկ գուռական: Ի տեսիլ այսպիսի ակնապարար մեծատարած գեղեցկութեանց բնութեան, ոչ միայն եղականացս երեւակայութիւն բնականաբար մղի ի խոխմունս բարձրագոնիցն, այլ տայ մեզ զհօր Մատինն իմաստասիրել զկար: Յայսպիսի մուսաճեմ սրբազանեալ տեղու ի հարկէ անապատական իմն լուծիւն, թող թուցն և եթ գայլալիք, վսեմական և բարձրադունիցն զգացմամբ ունին լուռ զտեղին, այլ ընդհակառակն ի տես գային ինձ անդ անհամար բաղմութիւնք տիեզերահա-

նել մարդասիրաբար դիտարկողներ առաջարկու-
թիւնն յիշեալ իշխանութեան , որ օսմանեան
երկրին ամբողջութեան մէջ մասը կը կազմէ :

Վէնայէն ամօրս 18—30էն արձակեալ հե-
ռագիր մի իմաց կուտայ թէ նոյն մարդասիրա-
բան օսմանեան դեպքանին և Սերվիոյ իշխանու-
թեան գործակրտարին մէջ սկսեալ են արդէն
հաշտութեան բանախօսութիւնքն Այս յաջող
բանախօսութեան օսմանեան արժէթովոյ գին-
քին սկսած բարձրանալ եւրոպոյ ամեն պօքմա-
յից մէջ, ինչպէս նաև 'ի Կ. Պօլիս :

Եստերական հրապարակաւ մի տնօրինեցաւ,
որ յետ այսօրիկ քրիստոնեայ պատանիք ըն-
դունուին 'ի զինուորական գործոց տէրութեան,
Այս նոր կարգադրութեան կը հետեւի թէ ոչ—
մահմէտական հպատակք արածութիւն պիտի
ունենան օսմանեան պետութեան զինուորական
ծառայութեանց մէջ ևս մտնելու :

Այս ամեն դրամներէն կը տեսնուի թէ հա-
ւասար իրաւամբ քաղաքակցութեան օրինա-
ւոր դրութիւնն տակաւ առ տակաւ պիտի հա-
տաւոր օսմանեան կայսերութեան մէջ , որով
քրիստոնեայ հպատակաց կացութիւնն իրօք
բարեւոյցեալով, մեծ տէրութեանց փափաքն կա-
տարուած պիտի լինի, և եւրոպայն իրաւունք
պիտի չունենայ երաշխաւորութիւն պահանջել
'ի Բարձրագոյն Դրանէ վասն գործադրութեան
վարչական նոր բարեկարգութեանց , որք հեա-
զհետէ գործադրուելու վերայ են , հետեւաբար
քաջայայտ եմք թէ մեծ տէրութեանց դեպքան-
քքն յետ փոքր ժամանակի պիտի վերադառնան
'ի Պօլիս և բարեկամական մտերիմ յարաբերու-
թիւնքն պիտի վերահաստատուին աւելի ամուր
հիմանց վերայ :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երկու ցարդ օսմանեան և օտար հայտաւայաց
իրերաց հետ ունեցած դատերն առեւտրական
այլեայլ ատենից առ ջն կը տեսնուէին վերջնա-
կան կերպիւ և առանց վերաքննութեան իրա-
ւանց : Այս դրութիւնն բաց 'ի զանազան ան-
պատեհութեանց , ունէր և զայն անպատեհու-
թիւն , որով դատական նուիրապետութեան

չակ և ակահաւոր արանց , որք դրոշ տային մի-
տահման ի վեհալայրն տաճար՝ կառուցելոյ 'ի
կատար լերին բարձու միոյ 'ի գաշտաւայրի անդ :
Գերաբուն զօրութիւն իմն աներեւոյթ մէջը զիս
ևս 'ի լեռան կոյս , առ որ բազմութեանց ուշ
նպատակի հակամիտէր : Բազումք նոր սկսանէին
զվերել իւրեանց , այլք հասեալ էին 'ի կէս ճա-
նապարհայն , և ոմանք խոնջեալ և պարտաւեալ
'ի տաճանակիր վատակոյց՝ գահազիծէին ի վայր
'ի նախապիս իւրեանց , և շատք սրտաբեկեալ
յետո չրտէին 'ի ժեռոտ լեռնէն , որ ոպառնայր
նոցա մահ և խորտակումն անկանգնելի : Նոյն
աներեւոյթ զօրութեամբ մղեալ ելի ես ևս ընդ-
այլս 'ի լեռն , և փութով հասեալ 'ի կատար
անդ՝ մտի 'ի սկսնազարդ տաճարն հրաշակիրու-
որոյ մեծամեծ դրուք ճօղապաճոյճ բացեալ
յանդ լիման առնէին ոսկեձեղուն սրահս ընդար-
ձակս , գեղապստեալ ոսկիակուռ գահոյիւք և
ընդ շոյնարն կամարաւն կախեալ կային ամե-
նայնաւ ճարտարութեամբ շարք աստղաճաճանչ
ջահից : Որմունք տաճարին առհասարակ դըր-
ուակեալ կեճայ քանդակօք և ընդելուզեալ
լուսապայծառ գոհար ակօմք և աղամանդօք
շողային վառ 'ի վառ , որոց և գեղազան նշոյլք
ծրածանին հարկանէին փայլ : Նստեալ կային
անդ յոսկիակուռ աթոռս և 'ի ձիւնափայլ մար-
մարեայ նստարանս Հայրենասիրաց խումբք , ո-
րոց առաքինութեանց բարեմասնութիւնք և
հանդէսք հայրենասիրականք 'ի կենցաղոյս յայս
աստիճան փառաց և բարեբաստութեան հա-
տուցեալ էին զնոսա : Հարուստ մի շուրջ հայե-
ցայ 'ի խումբս նոցին առ 'ի հետադօտել թէ ար-
դեօք կային անդ յայս գերաստիճան փառաց
բարձրացեալ անձինք՝ ելեալք յերանայ իմաց
բայց աւաղ , 'ի խորին տրամութիւն սրտիս՝ ոչ
զնք գտանէի անդ . այլ բոլորքն անձանօթք
էին ինձ և լեզուի խմով : Ելի ապա աստի 'ի միւս

կարգին մէջ բարձրագոյն աստիճանաց յատկա-
ցեալ իրաւասութիւնքն կը տրուէին նախադատ
ատենից :

Բարձրագոյն Դուռն՝ կամելով անհետ ընել
զայս անպատեհութիւնն , հարկ համարեցաւ
առեւտրական սրաշտոնատան մէջ գաշտաւանա-
կան յատուկ ատենս մի սահմանել՝ Արտաքոյ
կարգի Դատարան տնուամբ . որ պաշտօն պիտի
ունենայ օսմանեան և օտար հպատակաց մէջ
տեղի ունեցած դատերն տեսնել ընդ նախա-
դատութեամբ առեւտրական Ատենին առաջին
գահերէցին :

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱՐՈՒԹԻՒՆ

Հրապարակու 'ի 11—23 Դեկտեմբեր 1876

(Ծարուհակութիւն : Տէս Յախքեաց քիւրք)

Յօդ. 36. Ստիպողական պարագայից մէջ , ե-
թէ ընդհանուր ժողովը գումարուած չէ , նա-
խարարութիւնը կրնայ տրամադրութիւններ
ձեռք առնուլ տէրութիւնը փոխադէ մը պահ-
պանելու կամ հատարակաց անդորրութիւնն ա-
պահովելու համար :

Այն տրամադրութիւնները՝ կայսերական Ի-
րատեով վաւերացուելէ ետեւ՝ առ ժամանակեայ
կերպիւ օրինաց զօրութիւն ունի , եթէ Սահմա-
նադրութեան հակառակ չեն : Եթեալ տրամա-
դրութիւններն ընդհանուր ժողովոյ պիտի ներ-
կայացուին անմիջապէս՝ երբ որ գումարուի :

Յօդ. 37. Ամեն նախարար իրաւունք ունի
ծերակոյտին և երեսփոխանաց ժողովին ներկայ
գտնուելու , կամ իւր պաշտօնատան բարձրա-
գոյն պաշտօնակցներէն մին իւր կողմէն փոխա-
նորդաբար ժողովը զրկելու :

Իրաւունք ունի նաև ժողովէն խօսք ուզողոր
և է անդամէն առաջ յուրելու :

Յօդ. 38. Երբ քուէից առաւելութեան տըր-
ուած որոշման մը համեմատ նախարար մը հրա-
ւիրուի երեսփոխանաց խորհրդարանն երթալու ,
որպէսզի բացատրութիւններ տայ , նախարարը
պարտաւոր է իրեն ուղղեալ հարցմանց պատաս-
խանելու , թէ անձամբ ներկայանալով , թէ իւր
պաշտօնական բարձրագոյն պաշտօնատարներէն
մին իրեն փոխանորդ կարգելով , Սակայն իրաւ-

իմն գաւիթն լայնածաւալ , որ 'ի իրապատար
ցնծութիւն արմիս և միանգամայն 'ի սփոփումն
դառնակալի՝ ցառոյստեօսի բազմեալ ընդ այլ
յոսկիակուռ աթոռս՝ գերկու վեհ և պատկա-
ռելի անձինս , որոց երեսք ոչ միայն 'ի ծանօթ
եկին ինձ իսկ և իսկ , այլև քաղցր էր ինձ տե-
սանել զնոսա զրուցել ընդ միմեանս 'ի լեզու
իւրեանց մայրենի : Ի տես նոցին զնոյն ցնծու-
թիւն զգայի յանձին , որպէս զգայ մայր մի 'ի
տեսանել զորդի իւր սիրելի ընդ մեռեալս հա-
մարեալ : Երազաթով մտացս սլաք՝ բառ ելեք-
արական երազութեան , սրացաւ 'ի քաղաքն 'ի
կալկաթա , ուր այրն առաքինազարդ իւրովք
բարեպաշտական և հայրենասիրական գործովք
գրաւեաց զսիրտս ամենից , և ապա 'ի ծովացեալ
փարթամութեան իւրում յուշածեալ զտեղի
ճննգեան իւր՝ բարեհաճեցաւ անմահ ազգա-
սիրութեամբ , հաստատել անդ 'ի յիշատակ ան-
մահանալի հայրենասիրութեան իւր և յօգուտ
հայկազն մանկուոյն՝ զգարոցն մի , և զինի ոյս-
պիտի յուրից բարեմասնութեանց պերճ հանդի-
սից և Աստուածահաճոյ գնացից՝ հանդի 'ի Տէր ,
և աստ ահա վայելէ 'ի կեանս երանականս 'ի
տրիսուր առաքինական գործոց իւր : Միւս
ծերունին ևս յատիս 'ի կենցաղոյս բնակեալ եր-
բմն 'ի կղզին ճալա , պանծալի օրինակ ճշմարիտ
ազգասիրութեան լեալ Զուգայածնուեղ ազգին
իւր , հաստատէ զուսումնարան մի 'ի հայրենիս
անդ՝ իւրովք քրտնահոս երկամբք 'ի ձեռս բեր-
եալ տրեւք , և աստ ստանայ վարձս զարժանիս
'ի փոխարինութիւն : Ապա յուրի անկեալ մտի
յայլ իմն գաւիթ՝ պննեալ հանդուստիս ա-
ռաշնոյն , որ քնքուշ սեռիցն շուշանալայլ
վառ 'ի վառ իբր բոլրք նշուրից մարդամասն
արժւոյն 'ի ձիւնափայլ մարմարեայ նստարանս
բազմեալ զբարձրագոյնից կարեւոր իրաց ար-
կանէին ճառս գեղեցիկապատումս , իմաստօրէն

ունք ունի իւր պատասխանն յապաղելու , և թէ
հարկ համարի , պատասխանատուութիւնն 'իւր
վրայ առնելով :

ՊԱՇՏՈՆԱԿԱՐ

Յօդ. 39. Տէրութեան այլեայլ պաշտամանց
անուանումը՝ պէտք եղած արժանեաց և կարու-
ղութեան պայմաններն որոշող կանոնադրու-
թեանց համեմատ պիտի կատարուի :

Այն պայմաններով անուանեալ պաշտօնատար
մը չպիտի կրնայ պաշտօնակց ըլլալ կամ փոխելի-
եթէ չապացուցուի թէ իւր ընթացքն օրինաւո-
րապէս կարգարայնէ իւր պաշտօնակցութիւնը :

Եթէ հրաժարական չտայ , կամ մանաւանդ
եթէ իւր պաշտօնակցութիւնն անհրաժեշտ փ-
ղատուի կառավարութեան :

Այն պաշտօնատարը՝ որք բարեւոք ընթացից
և պարկեշտութեան փորձեր տան , ինչպէս նաև
անոնք որոց պաշտօնակցութիւնն անհրաժեշտ
դատուի կառավարութեան , յատուկ կանոնա-
դրութեամբ որոշելի տրամադրութեանց հա-
մեմատ իրաւունք պիտի ունենան յառաջա-
ման կամ հանգստեան ռոճկի և կամ ուրիշ պաշ-
տօնի համար պատրաստականութեան թոշակի :

Յօդ. 40. Բոլոր պաշտօնատարաց պարտակա-
նութիւններն յատուկ կանոնադրութեամբ
պիտի սահմանուին :

Ամեն պաշտօնատար իւր պարտականութեանց
սահմանին մէջ պատասխանատու է :

Յօդ. 41. Ամեն պաշտօնատար պարտական է
իւր մեծն յարգելու . օրինաց գծած սահմա-
ններէն դուրս հրամաններու պարտական չէ հը-
նազանդել : Մեծի մը հնազանդելով օրինաց հա-
կառակ գործեր կատարող պաշտօնատար մը
չկրնար պատասխանատուութեան տղատ մնալ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 42. Ընդհանուր ժողովն շ ժողովներէ
կը բաղկանայ : Աւագաց ժողովն կամ Երեսփո-
տէն , և Երեսփոխանաց ժողովն :

Յօդ. 43. Այս երկու ժողովներն ամեն տարի
Նոյեմբերի սկիզբը կը գումարուին , և յաջորդ
Մարտ Վին կը գումարուին : Թէ բացումն և թէ
փակումը կայսերական իրաւեով կը լինի : Երկու
ժողովներէն մին՝ միւսոյն գումարմանց շրջանէն
դուրս ժամանակի մէջ չկրնար գումարուիլ :

ատենաբանէին զգերարուն զանապարհելի
զիմաստութեան և զնախագոյ Հասուէն : Եթե
ձաղէին ստեպ նա իսկ զնստապաճոյճ սեթե-
եթեամբք կենցաղոյս , և աւագէին զմեղի գըր-
գանս և զիմանքի մեծութիւնս առօրեայ կե-
նացս : Ընդ երկար կայի զմայլեալ ընդ անդ-
րական հրճուանս և երանութիւնս նոցին , և
ահա մինչ այս մինչ այն տեսի 'ի բացուստ զի-
կու գիյուհի հարազատ՝ որք հոգեզուարճ
բերկրանօք և քաղցր հայեցուածովք դիմէին
առիս սիրելարար , իսկ իսկ թափանցիկ մտացս
փայլակ ցլացաւ 'ի քաղաքն 'ի Բաթալիմ . ուս
հարազատք երկրքին դիմեալքն առ իս՝ երբեմն
կենցաղակցէին : Աստուածահաճոյ համբաւ դ-
վելի առատածեռնութեան նոցին , և պերճ
հանգէսք ազգասիրութեան գեղապարոյր 'ի նո-
սա ցլացեալ յայնստարարառ քարոզ են լուե-
եայն առաքինական գործոց նոցին : Ոչ էին
զանցեալ սոքա զշորեքտասնամեակը յորժամ
ելին հեռացան յինէն ընդ ծնողաց իւրեանց 'ի
պանդախտութիւն . և անդ զարգացեալ , մին
մտանէ ընդ լծով ամուսնութեան , և միւսն
զիւսութեան իւրոյ զանթառամ ծաղիկ հան-
գոյն չքնաղին Աստուկան ընծայելոյ 'ի գրգարան
եղեմական , նուրբ երկնից : Սոցին գովան
մարդասիրական աշակցութիւն վառեալազգա-
սիրական վեհանձն հոգւով , կառուցանէ զճա-
շակերտս , զմինն ուշ 'ի կուրծս արկեալազգայ
յիշատակ Հայրենեաց , հիմնարկէ 'ի նա , և ըն-
միւսն զհայկական գրագառ մայրենի լեզուն ցան-
կացեալ յարտուել , յաւերժաբար յազգի իւ-
րում 'ի ճալա , հաստատէ անդ : Ահա այսպիսի
երջանկայիշատակ անձինք էին սոքա որք դե-
մէին առիս . և ևս բազկատարած , քաղցր զար-
տառուս զուարճախառն ցնծութեամբ հեղիս
յոջացս , յառաջ ընթացայ սիրելարար գիւրս
արկանել նոցա . այլ աւաղ , զի քմուսէի և ոչ

Յօդ. 44. Վեհա. Սուլթանը կրնայ ըստ պահանջան պարագայից՝ յառաջացնել ժողովոց բացման ժամանակն, և համառօտել կամերկա-

Յօդ. 45. Վեհափառ Սուլթանն անձամբ կամ իր փոխարինչի միջոցով կրնայ կըստ իր քաջամտ հանդիման : Տէրութեան նախարարք և երկու ժողովոց անդամք ալ ներկայ կը գտնուին :

Կայսերական ճառ մը կը կարդացուի, որ անցեալ տարւոյն մէջ կայսրութեան ներքին կառավարչութիւնն և արտաքին յարաբերութեանց վերաբերեալ կը ծանուցանէ, և յաջորդ տարւոյն համար հարկաւոր դատուած անօրէնութիւնները կը լուծուին :

(Շարունակեսցի)

ԱՂԳԱՅԻՆ

Մեր աշայ առջև ունիմք քաղաքիս Հայ Ընթերցատան անցեալ ամին երկու տարի հաշուեցումը, որոյ ճակատն նոյն Ընթերցատան գործերէն ժողովոյն յայտարարութիւնն գրուած է, որ հարկ կը համարուի հաղորդել մեր ընթերցողաց : Այս յայտարարութիւնն, նմանապէս յիշեալ հաստատութեան եկամտից դուրսէն կը տեսնուի թէ Զմիւռնոյ Հայ Ընթերցատան յաջորդ վիճակի մէջ չգտնուիր : Այս երկու տարիներէն ցաւալի է յոյժ, քանզի Զմիւռնա-նակ Հայոց ազգասիրութեան և ուսումնասիրութեան պակասութիւնն կապացուցանէ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Զմիւռնոյ Հայ Ընթերցատան եօթերորդ տարիի հաշուեցոյցը հրատարակելու առթիւ՝ կրկնութեամբ մեր շնորհակալութիւնը յայտնելու առաւոր և մերձաւոր հայրենակիցներու՝ որ իրենց բաժանորդագրութեամբ և նուէրներով իրենց քաջակցեցին : Սակայն ճշմարտութիւնը մեր վրայ պարտ կը գնէ խոստովանել որ Ընթերցատան յարատեւութիւնը աւելի հեռաւոր քան մերձաւոր ազգայիններու կը պարտաւորինք, որոնք այսպիսի հիմնադրութեան մը օգուտներն իրենց վրայ չեն կրնար պատեհութիւնն ունին : Օրինակի համար՝ մինչդեռ իննսուն բաժանորդ-

ներէ 3932 դահեկան հաւաքուած է տարւոյս շրջանին մէջ, հեռաւորակ քանի մը քաղաքակիցներ՝ մեծա. Յակոբեան եղբարք (Բարիդի և Աղեքսանդրի) մէջ և Գ. Յ. Բախապեան (Զուրիցի) խիստ կարեւոր թերթերէ ու հանգէսներէ զատ՝ 1644 դահեկան նուիրած են, որ Ընթերցատան ամբողջ հասոյթին գրեթէ կէսը կը կընդհանրեցնեն : Այլ որ աւելի ցաւալին՝ և մեր ժողովրդին ուսումնական կամ գրական ճաշակին խաղաղութեան դիմաւոր ապացոյցն է, մեր քաղաքակիցներէ շատեր՝ աւելի կամ նուազ հաճութեամբ Ընթերցատան բաժանորդագրուելէ և իրենց բաժինը վճարելէ ետքը՝ ընթերցատուն ոտք չեն կրնար, անշուշտ կարծելով որ մարդ յառաջդիմական գործի մ'աշակից գտնուելուն պէս՝ իր պարտաւորութիւնը կը լծենայ, և թէ աւելի մեծ պարտաւորութիւն մը չունին դէպ իրենց անձը, նոյն գործէն օգուտ քաղելու :

Այլ ճնորէն խորհուրդս իր ակնկալութիւնը մեր երիտասարդութեան ուսումնասիր մասին վրայ դրած՝ պիտ' աշխատի տալ Ընթերցատան այն կարեւոր տեղը որ այսպիսի հիմնադրութեան մը կը վայելէ : Յառաջիկայ շրջանին մէջ ստէպ առիթ պիտ' ունենամք մեր բաժանորդաց նուիրելու, այն բեմասացութիւններէ՝ որոնցմէ անցեալ շրջանին մէջ զուրկ մնացին զանազան պարագաներու պատճառաւ : և ընթերցատները պիտի գտնեն մեր թանգարանին մէջ ամեն կարեւոր հրատարակութիւնները որ իւրոյս եկած են և պիտի գան թէ Պօլիս և թէ Ռուսաստան :

Զմիւռնոյ եկեղեցական արձանագրութիւններէն քաղելով կիսամամբ թէ յընթաց անցեալ 1876 ամին քաղաքիս Հայ ժողովրդեան մէջ 114 ծնունդք եղեր են և 143 հոգի մեռեր են : Նոյն տարեկան շրջանին մէջ 42 ամուսնութեանց պատկազրութիւնք տեղի ունեցեր են : Թեւ մեռելոց թիւոյն մէջ 27—28 հոգի պանդուխտ ազգայինք կը գտնուին, որք քաղաքիս հիւանդանոցին մէջ մեռեր են, այսու ամենայնիւ դարձեալ ցաւօք սրտի կրտսերները որ ըզմիւռնաբնակ Հայոց թիւը որ 6000ի չափ է, ամենեւին աճման վիճակի մէջ չգտնուիր :

— Ի ջատագովութիւն մեր գրաբառ գեղեցիկ

ունի նա հասանել իւրում նպատակին և դասակցիլ ի խումբս հայրենասիրաց : Յնժութիւնն ի տեղ նորին՝ ճեպ ետ ոտիցս, որով և իջի փութով ի մարմանդ անդր ծաղկաւետեալ, ուր հանդիպեցայ ծերունազարդ իաշակիր կրօնաւորի միոյ, որ հանգարտաքայլ և վեհ կերպարանօք յառաջ խաղայր՝ դաւազան իշխանութեան ի ձեռին : Սա ևս մի է յակնաւոր որդւոց ի մոց անջատելոց յինէն, որ և յասպարիդի անդազգասիրութեան երբեմն քաջալան շահատակեալ ճշմարիտ ազգասէր հանդիսացաւ և միակ և եթ կարեկից խղճիկ մօրս : Անդուստ ի յարբունս երիտասարդութեան ի ծաղկեման հասակ գարնան իղձ իմն եռանդուն կանու զհոգի նորս ի գիւտ Աստուածաբանական մակացութեանց, որով և զարդարեալ զմիտս իւր բարոյական բարեմասնութեամբ և հանճարեղ խոհականութեամբ, մտանէ ապա ընդ լծով կրօնաւորութեան, վարի ի նմին ազգասիրաբար, և զօգուտ Հայրենեացն միշտ կալեալ իւր նպատակ, ոչ խնայէ զօհրանգամ վանձն իւր ի սէր նորին : Սոյն առաքինազարդ կրօնաւորն էր՝ որ երբեմն քաջալան շահատակեալ զինու արդարութեան՝ ճշմարիտ անոյան հանդիսանայ ընդդէմ թշնամեաց տան իւր Հայրենեաց : Սա էր՝ որ երբեմն վառեալ ազգասիրական վեհանձն հոգւով և անվեհեր արիւթեամբ ի ձեռն ի մատաղիւր և հանճարեղ գրութեանց առ եռամեծար Հայրապետն տանս մերոյ կաթողիկէ Ս. Ելիմիածին՝ աղերսէ զօգնութիւն նորին ի պահպանութիւն հայրենի ճաւաղ տան իւր, և հզօր արտօնութիւն նորին առ ի մեծանեղանդ բարեման կարգադրութիւնն, որով և աւաղելի վիճակ տարաբաղոյս առ լաւն ունէր նկրտել ալ աւանդ, (չկարեմ ստատնօր զուսպ ունեւարտասուացս), շար նախանձ հակառակորդաց ումանց՝ վառեալ սանդարմետական տոշորիչ

լեզուին հիմնաւոր փաստիւք և պարզ գրաբառ ոճով գրեալ ընդարձակ և ամենապատուական յօդուած մի ընկալաք յեղիպտոսէ, զոր մեր յաջորդ թիւոյն թանախարակներն մէջ պիտի հրատարակեմք :

«Մեծ—Եպարդոս Միտհաթ փաշայ՝ երէկ (9 Յունվար) ժամը 5ին միջոցները կատարեց մեր ազգային Պատրիարքարանն ընելիք այցելութիւնը : Գլխողական ուսանդք՝ փողոցին երկու կողմը ձեռքերնին կանանչ դափնիներ նորին Բարձրութեան գալտեանը կըսպասէին, որոց մէջ տեղէն անցնելով Միթհատ փաշայ Պատրիարքարան մտաւ ուր զինքը գիմաւորելու համար կըսպասէին Վարչութեան բոլոր անդամները, երեսփոխանաց մեծ մասն, ինչպէս նաև վահան էֆ. Համամճեան Ս. էֆ. և այլք :

«Մեծ—Եպարդոսին մէկ թեւէն վահան էֆ. և միւս թեւէն ալ Աղաբէկեան Ս. էֆ. մտած, առջեւն ալ Յ. Կոստանդ փաշայ երթալով Գարուսէ հեռակալի առաջնորդութեամբ, միատեղ վեր ելան ուր Ս. Պատրիարքը գիմաւորելով ընդունելութեան սրահը մտցուց :

«Մեծ—Եպարդոսը վերի սրահը ելածին պէս, ոտքի վրայ տոնեաբանութիւն մ'ըրաւ, Հայոց ազգին 400 տարիէ ի վեր ըրած հաւատարիմ հպատակութիւնը, և գործունեայ, աշխատասէր, համբերատար, ու պարտականութեան խիղճ և զգացում ունեցող ժողովուրդ մը ըլլալը գովութեամբ յիշատակելէն յետոյ, Տաճիկ և Հայ ժողովրդեան մէջ երկար տոնէն ի վեր տիրած եղբայրսիրական զգացումներն ու հաւատարմութիւնը այս անգամ կրկին նուիրագործելու և հաստատելու համար իւր վեհապետին կողմանէ յատկապէս մեր Պատրիարքարանը շրջապիւր յայտարարեց :

«Ս. Պատրիարքն առ այս պատասխանելով՝ ըսաւ թէ՝ իւր կրօնաւորապէս ու հանգամանքը հարկ կը դնէ իւր վրայ ամեն գործ կրօնական ազօքով սկսիլ. ուստի նախ և առաջ վեհա. Սուլթանին կենացը և երկրին բարօրութեանն ու այժմու նեղութիւններէն վաղ ընդ փոյթ ազատելուն համար ջերմ բարեմակութիւն մը ընելէն յետոյ, յանուն ազգին երախտագիտա-

խարաղանաւ, ի դերեւ ջանացան հանել սուտա-կասպաս փաստիւք զարդարացի գիտաւորութիւն հայրենասիրի առն, և զօգուտ և եթ փառացի առօրեայ կենաց իւրեանց խորհելով, արբուցին ինձ զմիւր գառնութեան անողքելի բաղոյն՝ միմիայն ի հեճուկա աղատամիտ առն հայրենասիրի : Եւ ապա դարձուցեալ առ նա զթեւ բանիցս՝ ասեմ. «Յառաջեալ, ո՛վ գեռահաշակի Հայրենասէր, զի թէպէտ և պանծալի շահատակութեանց քոց արգասեաց ի սէր Հայրենեաց ո՛չ ոք եղև երախտագէտ և վարձահատոյց ի կենցաղոյս, այլ ան զմտաւ՝ զի պոսկը և փառք առօրեայ կենացս փոշոտել ունին և անհետանալ. միայն ի տրիտուր գովանի վաստակոցդ անթառամ պատկազ յաւիտեանական լիւր արժանահատ, և շնորհաց այնմ անսպառ ապէնիազ գանձուցն աղբեր, որ դէտակն կալեալ ականատես եղև շահատակութեանց սխրա-լի հանգիսիդ : Արդարեւ դիւցազնական տրիութիւնք քոյ և միւլեւանդ հայրենասիրութեան քո հանգէսք թող լիցին և են մատնամիշ ապացոյցք վասն երիտասարդաց առ յապայ եկե-լոց, և երանելի զիս վերագրեցից՝ թէ Մենտո-րական խրատուցդ զգոնութեան հետեւող լի-ցին դասք Տեւմաքեանց : Լեր գիտակ նա իսկ զի երանելի յիշատակ քո՝ զինի մահուանդ, ունի անջնջելի մնալ ի տախտակ կրծոցս. զի որպէս մարթ է ինձ ի մուսացօնս ձգել զժամն՝ յորում զսիրամունդ քնքուշ զորդւոյդ մուս-ցեալ քո զօրհաս և զանձինդ սուգ, զՀայրենե-ացդ աւաղելի զաղէտս անդարմանելի : Զայս ասացեալ շարունակեցի զգնաց իմ և նա զիւրեւ Հայրենեալ ապա յետս առ ի դիտել ի յետին նուագ զտաճարն հրաշակելու, և ահա ի նոյն քացան աչք իմ և հրաշալին այն տեսարան եղև յինէն աներեւոյթ :

ՆՈՐՆ ԶՈՒՂԱ

